# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
# ԽՈՐՀՈՒՐԴ

---

## Ո Ր Ո Շ Ու Մ

### ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ 2025-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ (ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՅՏ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև Պալատ)** խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Սիմոն Բաբայանի, խորհրդի անդամներ՝ Էմին Բեգլարյանի, Պավել Գյուլումյանի, Գայանե Դեմիրչյանի, Մանե Կարապետյանի, Ռուբեն Հակոբյանի, Արսեն Հարությունյանի, Հարություն Հարությունյանի, Լիլիթ Ղազանչյանի, Կարեն Մեժլումյանի և Մարինե Ֆարմանյանի,

քննության առնելով Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի 2025-2027 թվականների ծախսերի նախահաշիվը (բյուջետային հայտ)՝ պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար Հայաստանի Հանրապետության կառավարությանը ներկայացնելու մասին հարցը,

հաշվի առնելով սույն որոշման հավելվածում նշված հիմնավորումը,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի և 45-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով,

***Ո Ր Ո Շ Ե Ց՝***

***– Հաստատել Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի 2025-2027 թվականի ծախսերի նախահաշիվը (բյուջետային հայտ)՝ համաձայն հավելվածի:***

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝ Սիմոն Բաբայան

**19 մարտի 2024թ.**
**թիվ 4/16-Լ**
**ք. Երևան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

*Հավելված՝*
*ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի*
*19.03.2024թ. 4/16-Լ որոշման*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ 2025 - 2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ (ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՅՏ)

19.03.2024թ.

Սույն բյուջետային հայտը կազմվել է «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ՝ Օրենք**) 45-րդ հոդվածի համաձայն:

| **2025** | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ***Ա. Հանրային պաշտպանի Գրասենյակի ղեկավարի, ղեկավարի տեղակալների և հանրային պաշտպանների հաստիքների պաշտոնային դրույքաչափեր («Փաստաբանության մասին» օրենքի 45-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ և 7-րդ մասեր)*** | | | | | |
| **№** | **Հաստիքի անվանումը (պաշտոնը)** | **Հաստիքի քանակը** | **Հաստիքի համար աշխատավարձի պաշտոնային դրույքաչափը՝ ՀՀ դրամ** | **Հաստիքի մեկ ամսվա հաշվարկը՝ ՀՀ դրամ** | **Հաստիքի տարեկան հաշվարկը (12 ամիս)՝ ՀՀ դրամ** |
| 1 | Գրասենյակի ղեկավար | 1 | 676.000 | 676.000 | 8.112.000 |
| 2 | Գրասենյակի ղեկավարի տեղակալ | 2 | 540.800 | 1.081.600 | 12.979.200 |
| 3 | Հանրային պաշտպան | 83 | 540.800 | 44.886.400 | 538.636.800 |
| **Ընդամենը՝ պաշտոնային դրույքաչափեր ՀՀ դրամ** | | | | **46.644.000** | **559.728.000** |
| ***Բ. Հանրային պաշտպանի Գրասենյակի գործունեության ապահովման հետ կապված այլ ծախսերի փոխհատուցում՝ պաշտոնային դրույքաչափերի հանրագումարի 30 %-ի չափով («Փաստաբանության մասին» օրենքի 45-րդ հոդվածի 5-րդ և 8-րդ մասեր)*** | | | | | |

| № | Պաշտոնային դրույքաչափերի հանրագումար՝ ՀՀ դրամ | Փոխհատուցման տոկոսը | Այլ ծախսերի փոխհատուցման գումարը՝ ՀՀ դրամ |
|---|---|---|---|
| 1 | **559.728.000** | 30% | **167.918.400** |
| ***Գ. Հանրային պաշտպանների արտաժամյա աշխատանքների համար վճարներ՝ հանրային պաշտպանների պաշտոնային դրույքաչափերի վճարման համար նախատեսված ընդհանուր գումարի 15 %-ի չափով («Փաստաբանության մասին» օրենքի 45-րդ հոդվածի 5-րդ և 7.1-րդ մասեր)*** | | | |
| **№** | **Հանրային պաշտպանների պաշտոնային դրույքաչափերի հանրագումար՝ ՀՀ դրամ** | **Փոխհատուցման տոկոսը** | **Արտաժամյա աշխատանքների համար վճարների փոխհատուցման գումարը՝ ՀՀ դրամ** |
| **1** | **538.636.800** | **15%** | **80.795.520** |
| **Ընդամենը՝ 2025 թվականի բյուջե (Պաշտոնային դրույքաչափերի հանրագումար + 30% այլ ծախսերի + 15% արտաժամյա աշխատանքի համար վճարումների փոխհատուցման գումար)՝ ՀՀ դրամ** | | | **808.441.920**<br>**Ութ հարյուր ութ միլիոն չորս հարյուր քառասունմեկ հազար ինը հարյուր քսան** |

| ***2026*** | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ***Ա. Հանրային պաշտպանի Գրասենյակի ղեկավարի, ղեկավարի տեղակալների և հանրային պաշտպանների հաստիքների պաշտոնային դրույքաչափեր («Փաստաբանության մասին» օրենքի 45-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ և 7-րդ մասեր)*** | | | | | |
| **№** | **Հաստիքի անվանումը (պաշտոնը)** | **Հաստիքի քանակը** | **Հաստիքի համար աշխատավարձի պաշտոնային դրույքաչափը՝ ՀՀ դրամ** | **Հաստիքի մեկ ամսվա հաշվարկը՝ ՀՀ դրամ** | **Հաստիքի տարեկան հաշվարկը (12 ամիս)՝ ՀՀ դրամ** |
| 1 | Գրասենյակի ղեկավար | 1 | 676.000 | 676.000 | 8.112.000 |
| 2 | Գրասենյակի ղեկավարի տեղակալ | 2 | 540.800 | 1.081.600 | 12.979.200 |
| 3 | Հանրային պաշտպան | 97 | 540.800 | 52.457.600 | 629.491.200 |
| **Ընդամենը՝ պաշտոնային դրույքաչափեր ՀՀ դրամ** | | | | **54.215.200** | **650.582.400** |
| ***Բ. Հանրային պաշտպանի Գրասենյակի գործունեության ապահովման հետ կապված այլ ծախսերի փոխհատուցում՝ պաշտոնային դրույքաչափերի հանրագումարի 30 %-ի չափով («Փաստաբանության մասին» օրենքի 45-րդ հոդվածի 5-րդ և 8-րդ մասեր)*** | | | | | |

| № | Պաշտոնային դրույքաչափերի հանրագումար՝ ՀՀ դրամ | Փոխհատուցման տոկոսը | Այլ ծախսերի փոխհատուցման գումարը՝ ՀՀ դրամ |
|---|---|---|---|
| 1 | **650.582.400** | 30% | **195.174.720** |

***Գ. Հանրային պաշտպանների արտաժամյա աշխատանքների համար վճարներ՝ հանրային պաշտպանների պաշտոնային դրույքաչափերի վճարման համար նախատեսված ընդհանուր գումարի 15 %-ի չափով («Փաստաբանության մասին» օրենքի 45-րդ հոդվածի 5-րդ և 7.1-րդ մասեր)***

| № | Հանրային պաշտպանների պաշտոնային դրույքաչափերի հանրագումար՝ ՀՀ դրամ | Փոխհատուցման տոկոսը | Արտաժամյա աշխատանքների համար վճարների փոխհատուցման գումարը՝ ՀՀ դրամ |
|---|---|---|---|
| **1** | 629.491.200 | **15%** | **94.423.680** |

| | |
|---|---|
| **Ընդամենը՝ 2026 թվականի բյուջե (Պաշտոնային դրույքաչափերի հանրագումար + 30% այլ ծախսերի + 15% արտաժամյա աշխատանքի համար վճարումների փոխհատուցման գումար)՝ ՀՀ դրամ** | **940.180.800** |
| | **ինը հարյուր քառասուն միլիոն հարյուր ութսուն հազար ութ հարյուր** |

***2027***

***Ա. Հանրային պաշտպանի Գրասենյակի ղեկավարի, ղեկավարի տեղակալների և հանրային պաշտպանների հաստիքների պաշտոնային դրույքաչափեր***
***(«Փաստաբանության մասին» օրենքի 45-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ և 7-րդ մասեր)***

| **№** | **Հաստիքի անվանումը (պաշտոնը)** | **Հաստիքի քանակը** | **Հաստիքի համար աշխատավարձի պաշտոնային դրույքաչափը՝ ՀՀ դրամ** | **Հաստիքի մեկ ամսվա հաշվարկը՝ ՀՀ դրամ** | **Հաստիքի տարեկան հաշվարկը (12 ամիս)՝ ՀՀ դրամ** |
|---|---|---|---|---|---|
| 1 | Գրասենյակի ղեկավար | 1 | 676.000 | 676.000 | 8.112.000 |
| 2 | Գրասենյակի ղեկավարի տեղակալ | 2 | 540.800 | 1.081.600 | 12.979.200 |
| 3 | Հանրային պաշտպան | 111 | 540.800 | 60.028.800 | 720.345.600 |
| **Ընդամենը՝ պաշտոնային դրույքաչափեր ՀՀ դրամ** | | | | **61.786.400** | **741.436.800** |

***Բ. Հանրային պաշտպանի Գրասենյակի գործունեության ապահովման հետ կապված այլ ծախսերի փոխհատուցում՝ պաշտոնային դրույքաչափերի հանրագումարի 30 %-ի չափով***
***(«Փաստաբանության մասին» օրենքի 45-րդ հոդվածի 5-րդ և 8-րդ մասեր)***

| **№** | **Պաշտոնային դրույքաչափերի հանրագումար՝ ՀՀ դրամ** | **Փոխհատուցման տոկոսը** | **Այլ ծախսերի փոխհատուցման գումարը՝ ՀՀ դրամ** |
|---|---|---|---|
| 1 | **741.436.800** | 30% | **222.431.040** |

***Գ. Հանրային պաշտպանների արտաժամյա աշխատանքների համար վճարներ՝ հանրային պաշտպանների պաշտոնային դրույքաչափերի վճարման համար նախատեսված ընդհանուր գումարի 15 %-ի չափով («Փաստաբանության մասին» օրենքի 45-րդ հոդվածի 5-րդ և 7.1-րդ մասեր)***

| **№** | **Հանրային պաշտպանների պաշտոնային դրույքաչափերի հանրագումար՝ ՀՀ դրամ** | **Փոխհատուցման տոկոսը** | **Արտաժամյա աշխատանքների համար վճարների փոխհատուցման գումարը՝ ՀՀ դրամ** |
|---|---|---|---|
| **1** | 720.345.600 | **15%** | **108.051.840** |

| | |
|---|---|
| **Ընդամենը՝ 2027 թվականի բյուջե (Պաշտոնային դրույքաչափերի հանրագումար + 30% այլ ծախսերի + 15% արտաժամյա աշխատանքի համար վճարումների փոխհատուցման գումար)՝ ՀՀ դրամ** | **1.071.919.680** |
| | **Մեկ միլիարդ յոթանասունմեկ միլիոն ինը հարյուր տասնինը հազար վեց հարյուր ութսուն** |

***Առդիր՝*** Բյուջետային հայտի հիմնավորումը (ՀՊԳ վիճակագրությունը):

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝ Սիմոն Բաբայան

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ - ԱՌԱՋԱՐԿ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ**
**2025-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ**
**(ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՅՏԻ)**

12.03.2024թ.

# I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) հանրային պաշտպանի գրասենյակում (**այսուհետ՝ Գրասենյակ**) յուրաքանչյուր տարի գրանցվում է գործերի քանակի կայուն և զգալի աճ: Գրասենյակի գործերի աճը պայմանավորված է մի շարք գործոններով՝

- *օրենսդրական լրացումների արդյունքում Գրասենյակի շահառուների ցանկի համալրմամբ,*
- *քրեական վարույթներով որոշակի գործողություններին պաշտպանի պարտադիր ներգրավման անհրաժեշտությամբ,*
- *հանցագործությունների թվի և/կամ վարույթն իրականացնող մարմինների կողմից քննված քրեական գործերի աճ,*
- *Գրասենյակի գործունեության վերաբերյալ հանրային իրազեկվածության և հանրության իրավագիտակցության բարձրացմամբ,*
- *հանրային պաշտպանների մասնագիտական պատրաստվածության բարելավման և Գրասենյակի նկատմամբ վստահության աճի հանգամանքներով,*
- *Լեռնային Ղարաբաղից 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո բռնի տեղահանված քաղաքացիներով:*

- **Օրենսդրական լրացումներ, քրեական վարույթներով որոշակի գործողություններին պաշտպանի պարտադիր ներգրավման անհրաժեշտություն.**

Հայտնի է նաև, որ «Փաստաբանության մասին» օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում անվճար իրավաբանական օգնություն ստացող անձանց շրջանակը պարբերաբար ավելացել է: 05.10.2022թ. ընդունված «Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ

կատարելու մասին» օրենքով Գրասենյակի շահառուների ցանկը լրացվել է 4 նոր խմբերով, այն հասցվելով 20 խմբերի: Մինչդեռ, մինչև 2013 թվականը «Փաստաբանության մասին» օրենքով քաղաքացիների դիմումների հիման վրա անվճար իրավաբանական օգնություն տրամադրվում էր միայն ալիմենտի գանձման, խեղման կամ առողջությանն այլ վնաս պատճառելու, ինչպես նաև կերակրողի մահվան հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ գործերով:

Հարկ է նաև նշել, որ նոր քրեադատավարական կարգավորումներով վարույթային գործողությունների շրջանակների ընդլայնումը, դատավարական ժամկետների կրճատումը, առանձին դեպքերում հստակ ժամկետների սահմանումը, պաշտպանի պարտադիր մասնակցության դեպքերը, ինչպես նաև միևնույն վարույթի շրջանակում մեկ հանրային պաշտպանի կողմից մեկ մեղադրյալ ներկայացնելու օրենսդրական պահանջն անխուսափելիորեն հանգեցրել է քրեական գործերով վարույթն իրականացնող մարմինների կողմից ներկայացվող գրավոր պահանջների ժամանակին կատարման անհնարինությանը: Քրեադատավարական կարգավորմամբ պաշտպանի պարտադիր մասնակցության դեպքերում, վերջինիս ներգրավվումն օրենքի իմպերատիվ պահանջ է, և վարույթն իրականացնող մարմինը չի կարող որևէ պատճառաբանությամբ ընդունել հրաժարումը, որն իր հերթին հանգեցրել է լրացուցիչ ռեսուրսների ներգրավման անհրաժեշտության:

Վերջին օրենսդրական փոփոխությունների արդյունքում ստեղծված մասնագիտական՝ հակակոռուպցիոն դատարանների մարզային նստավայրերը տեղակայվել են Գրասենյակի գործող սպասարկման տարածքներից մեծ հեռավորության վրա, որն անհրաժեշտություն է առաջացրել այդ դատարանների գտնվելու վայրերին մոտ տարածքներում ստեղծել Գրասենյակի նստավայրեր և, դրանք համալրել նոր հաստիքներով:

- **Լեռնային Ղարաբաղից 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո բռնի տեղահանված քաղաքացիներին տրամադրվող իրավաբանական օգնություն.**

Հանրային պաշտպանի Գրասենյակի շահառուներից են հանդիսանում նաև ՀՀ-ում ժամանակավոր պաշտպանություն ստացած անձիք, որոնց թվին են դասվում նաև Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցները: Հատկանշական է, որ 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Արցախից բռնի տեղահանված քաղաքացիները, հանդիպում են բազում իրավական խնդիրների՝ կապված ՀՀ-ում առկա իրավակարգավորումների հետ, հետևաբար վերջիններս անվճար իրավաբանական օգնություն են ստանում Գրասենյակից:

- **Հանցագործությունների թվի և/կամ վարույթն իրականացնող մարմինների կողմից քննված քրեական գործերի աճ.**

Ըստ ՀՀ քննչական կոմիտեի հրապարակած պաշտոնական տվյալների 2023 թվականի ընթացքում, վերջինիս վարույթում քննվել է շուրջ 184.018 գործ,

իսկ 2022 թվականին՝ 59.830 վարույթ, այսինքն վարույթների քանակը 2022 թվականի համեմատությամբ աճել է 124.188-ով կամ 207.5%-ով:

ՀՀ քննչական կոմիտեի կողմի համապատասխան հրապարակմամբ նաև հայտնվել է, որ վարույթների նման աճը պայմանավորված է նոր օրենսդրական փոփոխությամբ, ըստ որի ստացված հաղորդումների հիման վրա այլևս նյութեր չեն նախապատրաստվում, այլ 24 ժամվա ընթացքում քննիչի կողմից լուծվում է վարույթ նախաձեռնելու կամ չնախաձեռնելու հարցը:

Նման պայմաններում ակնհայտ է, որ համաչափորեն ավելացել է նաև հանրային պաշտպան ներգրավվելու անհրաժեշտությունը, հատկապես այն պարագայում, երբ անձին, թե ձերբակալելիս, թե մեղադրանք առաջադրելիս պաշտպանի մասնակցությունն օրենսդրական նոր կարգավորումներով դարձել է պարտադիր, ընդ որում՝ սեղմ ժամկետներում: Որպիսի պահանջն իր հերթին հանգեցրել է նրան, որ վարույթն իրականացնող մարմիններն այդ դրույթներն ապահովելու հարցը լուծում են Հանրային պաշտպանի գրասենյակի միջոցով:

- **Գրասենյակի գործունեության վերաբերյալ հանրային իրազեկվածության և հանրության իրավագիտակցության բարձրացումը, հանրային պաշտպանների մասնագիտական պատրաստվածության բարելավման և Գրասենյակի նկատմամբ վստահության աճը.**

Իրազեկվածության և հանրային պաշտպանների աշխատանքի արդյունավետության բարձրացմամբ պայմանավորված տարեցտարի աճել է նաև Գրասենյակ դիմող դատապարտյալների թիվը՝ 2023 թվականի ընթացքում դիմել է 324 դատապարտյալ: Հատկանշական է այն հանգամանքը, որ հանրային պաշտպանները դատապարտյալներին տեսակցում են քրեակատարողական հիմնարկներում, որը բավականին ժամանակատար է, հաշվի առնելով այն հանգամանքը, որ քրեակատարողական հիմնարկները հիմնականում տեղակայված են մարզերում, բնակավայրերից (Գրասենյակի նստավայրերից) բավականին հեռավորության վրա, որն ավելացնում է նշված խմբի անձանց իրավաբանական օգնություն ցուցաբերելու համար տրամադրվող ժամանակահատվածը[1] և ծախսված նյութական ռեսուրսները: Միևնույն ժամանակ բավականին ժամանակ է ծախսվում ինչպես նշված վայրեր հասնելու համար, այնպես էլ հիմնարկների վարչակազմերի կողմից տեսակցությունը կազմակերպելու համար: Թեպետ, «Արմավիր» ՔԿՀ-ում 2023 թվականին տեղադրված առնցանց տեսակապի միջոցով հնարավոր է եղել որոշակիորեն կրճատել հանրային պաշտպանների այցելությունը, սակայն քննչական և դատավարական գործողություններին մասնակցելու համար հանրային

[1] Միջինը 3-4 ժամ, մինչդեռ խորհրդատվությունը Գրասենյակում տրամադրելու դեպքում հանրային պաշտպանը ծախսում է միջինը 45 րոպե:

պաշտպանները շարունակում են այցելել ՔԿՀ: Բացի դա, դատապարտյալներն անվճար իրավաբանական օգնություն են նաև հայցում քաղաքացիական, վարչական և այլ բնույթի հարցերով:

Գրասենյակի շահառուները հանդես են գալիս նաև ավարտված գործերը վերանայելու պահանջներով, որի համար անհրաժեշտ են հավելյալ ռեսուրսներ՝ անցյալում քննված գործի նյութերի ձեռք բերման, ծանոթացման, ուսումնասիրության և հիմքեր լինելու դեպքում դատարան դիմելու, դատարանում նշված անձանց շահերը ներկայացնելու համար: Առանձնահատուկ ուշադրության է արժանի այն, որ հանրային պաշտպանների խիստ ծանրաբեռնվածության, ինչպես նաև վերը նշված պատճառներով ֆիզիկապես չեն հասցնում բավարար հաճախականությամբ այցելել անազատության մեջ գտնվող իրենց պաշտպանյալներին, որը կարող է հանգեցնել պաշտպանության արդյունավետության նվազման:

Հանրային պաշտպանի Գրասենյակի ի թիվս այլոց իրավաբանական օգնություն է տրամադրում 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամները, որոնց զգալի մասն ունի տեղաշարժման խնդիր, որի պատճառով այդ քաղաքացիներին իրավաբանական օգնություն տրամադրվում է տնայցեր կատարելու միջոցով, որը ևս ժամանակատար է[2]:

Հանրային պաշտպանի Գրասենյակի շահառուներից են նաև հոգեբուժական կազմակերպություններում բուժվող հոգեկան խանգարումներ ունեցող անձինք, որոնց նույնպես օգնություն է տրամադրվում հոգեբուժարան այցելելու միջոցով:

## II. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Միջինում յուրաքանչյուր հանրային պաշտպանի վարույթում միայն ներկայացուցչությունների և քրեական վարույթներով մասնակցությունների մասով 2023 թվականի ընթացքում հաշվվել է 282 գործ: Մինչդեռ ակնհայտ է, որ պատշաճ և ժամանակին իրավաբանական օգնություն ցուցաբերելու համար հանրային պաշտպանի վարույթում գտնվող գործերի քանակն անհրաժեշտ է կտրուկ նվազեցնել, այն առավելագույնը հասցնելով 80-ի, որի համար անհրաժեշտ է ավելացնել հաստիքների քանակը: Այդուհանդերձ, պետության բեռը շեշտակի չավելացնելու համար, որպես իրատեսական լուծում, առաջարկում ենք խնդիրը լուծել փուլային տարբերակով՝ յուրաքանչյուր տարի հաստիքների քանակն ավելացնելով առնվազն 20 (քսան) տոկոսով՝ հետզհետե հասնելով նախանշված նպատակին: Վերջնանպատակն այդ դեպքում պետք է լինի հասնել առկա ծանրաբեռնվածությանը համապատասխան բավարար ռեսուրսների հատկացմանը, որը հետագայում արդեն յուրաքանչյուր տարի կվերանայվի սահմանված նպատակին համապատասխան:

Հարկ է նկատել, որ հանրային պաշտպանի աշխատավարձը հավասարեցված լինելով Երևան քաղաքի դատախազության ավագ դատախազի

---

[2] Միջինը՝ 2,5 ժամ, մինչդեռ օգնությունը Գրասենյակում տրամադրելու դեպքում հանրային պաշտպանը ծախսում է միջինը 45 րոպե:

համար օրենքով սահմանված պաշտոնային դրույքաչափին, հանրային պաշտպանը չի օգտվում դատախազի համար նախատեսված աշխատավարձին հավասարեցված այլ վճարներից, ինչպես նաև սոցիալական երաշխիքներից:

Մինչդեռ, օրենսդրական մի շարք առաջարկությունների հիմնավորումներում բարձր են դասվում միայն դատախազի աշխատանքի ռիսկայնությունը, հատկապես սպանության, առևանգման, դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու, բժշկական սխալի, խարդախության, քրեական ենթամշակույթի հետ կապված հանցագործությունների, ՃԵԿ կանոնների հանցավոր խախտումների, խուլիգանությունների, խոշտանգումների, թմրամիջոցների ապօրինի շրջանառության և այլ դեպքերով հարուցված վարույթներով:

Թեպետ հենց նույն վարույթներով հիմնականում թիրախավորվում են վերը նշված արարքների կատարման մեջ մեղադրվող անձանց պաշտպանները՝ նույնացվելով իրենց վստահորդների հետ, ընդ որում՝ հիմնականում հանրային պաշտպանները, քանի որ հասարակության կողմից պարսավելի արարքների մեջ մեղադրվող անձանց պաշտպանությունը մեծամասամբ ապահովվում է Հանրային պաշտպանի գրասենյակի փաստաբանների միջոցով:

Ներկայացված խնդիրները կարող են կարգավորվել Գրասենյակին հանրային պաշտպանների լրացուցիչ հաստիքներ տրամադրելով և ամսական պաշտոնային դրույքաչափի 100 տոկոսի չափով հավելում վճարելով:

Հարկ է նաև նկատել, որ օրենսդրական շարունակական բարեփոխումները, որոնք ուղղված լինելով անձանց իրավունքների պաշտպանությանը, ենթադրում են հավելյալ ռեսուրսների պահանջ, որպիսի պայմաններում կարող է վտանգվել քրեական գործերով վարույթ իրականացնող մարմինների՝ անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու առնչությամբ կայացված որոշումների ժամանակին կատարման ապահովումը, ինչպես նաև հանրային պաշտպանի գրասենյակին դիմող քաղաքացիներին անվճար որակյալ իրավաբանական օգնության տրամադրումը:

Թեև 2022 թվականի երկրորդ կեսից հետո հատկացված լրացուցիչ ֆինանսավորմամբ հնարավոր է եղել ապահովել ևս 10 հանրային պաշտպանի հաստիք, դրանք հասցնելով 69-ի, սակայն դրանով ևս հնարավոր չէ ողջ ծավալով ժամանակին և պատշաճ ապահովել Գրասենյակի կողմից սպասարկվող ընթացիկ, ինչպես նաև կանխատեսվող գործի քանակը:

Կարևորում ենք առանձնացնել նաև այն հանգամանքը, որ ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում քրեական վարույթների շրջանակներում հանրային պաշտպանները, ոչ աշխատանքային օրերին և ժամերին, այդ թվում՝ գիշերային ժամանակ, մասնակցում են քննչական և այլ դատավարական գործողությունների:

Երևան քաղաքում և Հայաստանի Հանրապետության մարզերում անվճար իրավաբանական օգնության տրամադրման արդյունավետությունն ապահովելու նպատակով հանրային պաշտպանների հաստիքները տեղաբաշխվել են վարչատարածքային սկզբունքով՝ ըստ մարզերի, ինչպես նաև ըստ մասնագիտացման (քրեաիրավական, քաղաքացիաիրավական), դատարանների նստավայրերի և գործերի քանակի հաշվառմամբ, հաշվի առնելով նաև շահերի

բախման առաջացման վտանգը, ինչպես նաև միևնույն վարույթի շրջանակում մեկ հանրային պաշտպանի կողմից մեկ մեղադրյալ ներկայացնելու և պաշտպանից հրաժարվելու դեպքում կրկին ապահովելու անհրաժեշտության պարագայում նոր (այլ) հանրային պաշտպան նշանակելու օրենսդրական պահանջի ապահովման անհրաժեշտությունը:

2022 թվականի երկրորդ կեսից հանրային պաշտպանի 53 հաստիք նախատեսված է եղել քրեաիրավական ոլորտում, իսկ 16 հաստիք՝ քաղաքացիաիրավական (այդ թվում՝ վարչաիրավական) ոլորտում անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու համար:

Սակայն, հաշվի առնելով քրեական գործերի կտրուկ աճը, քաղաքացիաիրավական մասնագիտացման երկու հաստիք վերաբաշխվել է քրեաիրավական մասնագիտացման հանրային պաշտպանների միջև, որն էլ իր ավելացրել է քաղաքացիաիրավական մասնագիտացմամբ հանրային պաշտպանների ծանրաբեռնվածությունը:

***ԳՐԱՍԵՆՅԱԿԻ կողմից վարած գործերի վիճակագրական տվյալները՝ 2011–2023 թվականների համար***

| **Ա. Քրեական գործերով** | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ***Ժամանա-կահատված*** | ***Գործերի քանակ*** | ***ՀՊ հաստիքների ընդհանուր/մաս-նագիտացմամբ քանակ*** | ***Գործերի աճ թվով նախորդ տարվա համեմատ*** | ***Գործերի աճ տոկոսով նախորդ տարվա համեմատ*** | ***Քրեաիրավական ուղղվածության մեկ հաստիքին բաժին ընկնող գործերի քանակ*** |
| 2011 | 2962 | 32 | - | - | |
| 2012[3] | 3102 | 49[4] | 140 | 5% | |
| 2013 | 3219 | 49 | 117 | 4% | |
| 2014 | 3666 | 49/43 | 447 | 14% | 85 |
| 2015 | 4600 | 49/43 | 934 | 25% | 107 |
| 2016[5] | 5264 | 54/44 | 664 | 14% | 120 |
| 2017 | 5891 | 54/44 | 627 | 12% | 134 |
| 2018 | 6688 | 54/44 | 797 | 14% | 152 |
| 2019 | 7183 | 54/43 | 495 | 7.5% | 167 |
| 2020 | 7361 | 59/45 | 178 | 4% | 163 |
| 2021 | 10492 | 59/45 | 3131 | 42% | 233 |
| 2022 | 11117 | 69/53 | 625 | 6% | 210 |

[3] Մինչև 2012թ. սեպտեմբեր ամիսը գործել է հանրային պաշտպանի 32 հաստիք:

[4] 50 հաստիքից 1 հաստիքը Գրասենյակի ղեկավարի տեղակալի հաստիքն է: Հաստիքները նշված են ընդհանուր կարգով՝ քրեական և քաղաքացիական մասնագիտացումներով:

[5] 2016թ. հունվարի 1-ից հանրային պաշտպանի 5 հաստիք ավելացվել է:

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2023 | 15518 | 69/55[6] | 4401 | 40% | 282 |




Նշված տվյալների համաձայն՝ քրեաիրավական ուղղվածության հանրային պաշտպանների 55 հաստիքով 2023 թվականի ընթացքում վարվել է 15.518 քրեական գործ, այսինքն՝ մեկ հաստիքին բաժին է ընկել միջինում տարեկան **282** քրեական գործ: Ընդ որում, նշված գործերից 14.755 գործը քրեական վարույթով մեղադրյալի պաշտպանության կամ ներկայացուցչության գործեր են:

Հարկ է նկատել, որ նախորդ տարիների համեմատ գործերի քանակը 2023 թվականին ավելացել է շեշտակի՝ **40 տոկոսով, իսկ 2020 թվականի համեմատ (ընդամենը երեք տարի հետո)՝ ավելին քան կրկնակի**:

Ընդ որում՝ թեև 2020 թվականի համեմատ գործերի թիվը կրկնապատկվելուն զուգահեռ հաստիքների քանակը ավելացել է 10-ով, այսիքն՝ 20 տոկոսով:




[6] Նոր հաստիք պետության կողմից չի տրամադրվել, սակայն հաշվի առնելով քրեական մասնագիտացմամբ հանրային պաշտպանների սաստիկ ծանրաբեռնվածությունը քաղաքացիաիրավական մասնագիտացմամբ 2 հաստիք փոփոխվել է քրեաիրավականի

| Բ. Քաղաքացիական, վարչական, սահմանադրական գործեր | | | | |
|---|---|---|---|---|
| **Ժամանակահատված** | **Գործերի քանակ** | **ՀՊ հասփիքների ընդհանուր/մասնագիփացմամբ քանակ** | **Գործերի աճ թվով նախորդ փարվա համեմափ** | **Գործերի աճ փոկոսով նախորդ փարվա համեմափ** |
| 2011[7] | 12 | 32 | - | - |
| 2012 | 17 | 49 | 5 | 42% |
| 2013 | 363 | 49 | 346 | 2035% |
| 2014 | 1334[8] | 49/6 | 971 | 267% |
| 2015 | 2588 | 49/6 | 1254 | 94% |
| 2016 | 4750 | 54/10 | 2162 | 84% |
| 2017 | 5865 | 54/10 | 1115 | 23% |
| 2018 | 7021 | 54/10 | 1103 | 20% |
| 2019 | 8608 | 54/11 | 1587 | 23% |
| 2020 | 7926 | 59/14 | -682 | -8% |
| 2021 | 8800 | 59/14 | 874 | 11% |
| 2022 | 6947 | 69/16 | -1853 | -21% |
| 2023 | 6033 | 69/14 | -914 | -13% |

| Քաղաքացիական (վարչական) գործերով դատական ներկայացուցչություն | | |
|---|---|---|
| **Ժամանակահատված** | **Գործերի քանակ** | **Քաղաքացիաիրավական ուղղվածության մեկ հասփիքին փարվա ընթացքում բաժին ընկնող գործերի քանակ** |
| 2016 | 647 | 65 |
| 2017 | 862 | 86 |
| 2018 | 1182 | 118 |
| 2019 | 1460 | 133 |
| 2020 | 1584 | 113 |
| 2021 | 2013 | 143 |
| 2022 | 2565 | 161 |
| 2023 | 3705 | 265 |

Նշված տվյալների համաձայն՝ քաղաքացիաիրավական ուղղվածության

[7] 2011թ. միայն մի քանի քաղաքացիական գործերով էր նախատեսվում հանրային պաշտպան տրամադրել:
[8] Ներառում է նաև գրավոր և բանավոր խորհրդատվությունները:

հանրային պաշտպանի 14 հաստիքով 2023 թվականի ընթացքում իրականացվել է ներկայացուցչություն 3.705 քաղաքացիական (վարչական) գործով, այսինքն՝ մեկ հաստիքին բաժին է ընկել միջինում 265 ներկայացուցչության գործ: Ներկայացված վիճակագրական տվյալները վկայում են, որ 2014 թվականին վարված 1.334 գործի փոխարեն 2023 թվականին վարվել է 6.033 գործ:

Այլ կերպ ասած, 2013 թվականին 49 հանրային պաշտպանը վարել է ընդհանուր առմամբ 3.582 գործ, իսկ 2023 թվականին 69 հանրային պաշտպանը՝ ընդհանուր 21.551 գործ, ընդ որում՝ 10 հաստիքներն ավելացել են միայն 2022 թվականի երկրորդ կեսին: Ըստ այդմ, գործերի քանակը ավելացել է 17.969-ով, այսինքն 502%-ով, իսկ հանրային պաշտպանների հաստիքների քանակը 20-ով՝ 40%-ով:

Ինչ վերաբերում է 2022 թվականին տրամադրված թվով 10 հաստիքների լրացմամբ Գրասենյակի ծանրաբեռնվածության ակնկալվող նվազեցմանը, հարկ ենք համարում նշել, որ այն առավելապես ուղղվել է օրենսդրական նոր փոփոխություններով պայմանավորված ծանրաբռնվածության թոթափմանը:

Հետևապես, պետության կողմից լրացուցիչ տրամադրված հաստիքները, թեև որոշ չափով մեղմել են հանրային պաշտպանների գերծանրաբեռնվածության վիճակը, սակայն ակնհայտորեն խնդիրը չի լուծվել:

**Միաժամանակ նկատենք, որ ներկայացված ցուցանիշներն ակնհայտորեն վկայում են յուրաքանչյուր տարի Գրասենյակի ծանրաբեռնվածության կայուն աճի մասին, ընդ որում՝ բավականին զգալի:**

**Նման պայմաններում հաջորդիվ անհնարին կդառնա արդյունավետ պաշտպանության իրականացումը և իրավաբանական օգնության ցուցաբերումը, եթե համապատասխան լրացուցիչ ռեսուրսներ չներդրվեն:**

**Լրացուցիչ հաստիքների տրամադրման դեպքում հնարավոր կլինի մեղմել հանրային պաշտպանների ծանրաբեռնվածությունը:**

**Միաժամանակ կարևոր է նաև վերանայել հանրային պաշտպանների աշխատավարձի չափը, նախատեսել լրացուցիչ աշխատավարձի ֆոնդ և ապահովել սոցիալական երաշխիքներով, միայն որոնց ապահովման պարագայում կարող է զսպվել փորձառու կադրերի արտահոսքը:**

**Ելնելով ամբողջ վերոգրյալից՝ ՀՀ փաստաբանների պալատի խորհրդին առաջարկում եմ Հանրային պաշտպանի գրասենյակի ծախսերի՝ 2025-2027 թվականների համար հետևյալ նախահաշիվը (բյուջետային հայտը).**

| 2025 | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **Ա. Հանրային պաշտպանի Գրասենյակի ղեկավարի, ղեկավարի տեղակալների և հանրային պաշտպանների հաստիքների պաշտոնային դրույքաչափեր («Փաստաբանության մասին» օրենքի 45-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ և 7-րդ մասեր)** | | | | | |
| **№** | **Հաստիքի անվանումը (պաշտոնը)** | **Հաստիքի քանակը** | **Հաստիքի համար աշխատավարձի պաշտոնային դրույքաչափը՝ ՀՀ դրամ** | **Հաստիքի մեկ ամսվա հաշվարկը՝ ՀՀ դրամ** | **Հաստիքի տարեկան հաշվարկը (12 ամիս)՝ ՀՀ դրամ** |
| 1 | Գրասենյակի ղեկավար | 1 | 676.000 | 676.000 | 8.112.000 |
| 2 | Գրասենյակի ղեկավարի տեղակալ | 2 | 540.800 | 1.081.600 | 12.979.200 |
| 3 | Հանրային պաշտպան | 83 | 540.800 | 44.886.400 | 538.636.800 |
| **Ընդամենը՝ պաշտոնային դրույքաչափեր ՀՀ դրամ** | | | | **46.644.000** | **559.728.000** |

| **Բ. Հանրային պաշտպանի Գրասենյակի գործունեության ապահովման հետ կապված այլ ծախսերի փոխհատուցում՝ պաշտոնային դրույքաչափերի հանրագումարի 30 %-ի չափով («Փաստաբանության մասին» օրենքի 45-րդ հոդվածի 5-րդ և 8-րդ մասեր)** | | | |
|---|---|---|---|
| **№** | **Պաշտոնային դրույքաչափերի հանրագումար՝ ՀՀ դրամ** | **Փոխհատուցման տոկոսը** | **Այլ ծախսերի փոխհատուցման գումարը՝ ՀՀ դրամ** |
| 1 | **559.728.000** | 30% | **167.918.400** |

| **Գ. Հանրային պաշտպանների արտաժամյա աշխատանքների համար վճարներ՝ հանրային պաշտպանների պաշտոնային դրույքաչափերի վճարման համար նախատեսված ընդհանուր գումարի 15 %-ի չափով («Փաստաբանության մասին» օրենքի 45-րդ հոդվածի 5-րդ և 7.1-րդ մասեր)** | | | |
|---|---|---|---|
| **№** | **Հանրային պաշտպանների պաշտոնային դրույքաչափերի հանրագումար՝ ՀՀ դրամ** | **Փոխհատուցման տոկոսը** | **Արտաժամյա աշխատանքների համար վճարների փոխհատուցման գումարը՝ ՀՀ դրամ** |
| **1** | **538.636.800** | **15%** | **80.795.520** |

| | |
|---|---|
| **Ընդամենը՝ 2025 թվականի բյուջե (Պաշտոնային դրույքաչափերի հանրագումար + 30% այլ ծախսերի + 15% արտաժամյա աշխատանքի համար վճարումների փոխհատուցման գումար)՝ ՀՀ դրամ** | **808.441.920** |
| | **Ութ հարյուր ութ միլիոն չորս հարյուր քառասունմեկ հազար ինը հարյուր քսան** |

| 2026 |
|---|

**2025**

***Ա. Հանրային պաշտպանի Գրասենյակի ղեկավարի, ղեկավարի տեղակալների և հանրային պաշտպանների հասփիքների պաշտոնային դրույքաչափեր («Փաստաբանության մասին» օրենքի 45-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ և 7-րդ մասեր)***

| № | Հաստիքի անվանումը (պաշտոնը) | Հաստիքի քանակը | Հաստիքի համար աշխատավարձի պաշտոնային դրույքաչափը՝ ՀՀ դրամ | Հաստիքի մեկ ամսվա հաշվարկը՝ ՀՀ դրամ | Հաստիքի տարեկան հաշվարկը (12 ամիս)՝ ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Գրասենյակի ղեկավար | 1 | 676.000 | 676.000 | 8.112.000 |
| 2 | Գրասենյակի ղեկավարի տեղակալ | 2 | 540.800 | 1.081.600 | 12.979.200 |
| 3 | Հանրային պաշտպան | 83 | 540.800 | 44.886.400 | 538.636.800 |
| **Ընդամենը՝ պաշտոնային դրույքաչափեր ՀՀ դրամ** | | | | **46.644.000** | **559.728.000** |

***Բ. Հանրային պաշտպանի Գրասենյակի գործունեության ապահովման հետ կապված այլ ծախսերի փոխհատուցում՝ պաշտոնային դրույքաչափերի հանրագումարի 30 %-ի չափով («Փաստաբանության մասին» օրենքի 45-րդ հոդվածի 5-րդ և 8-րդ մասեր)***

| № | Պաշտոնային դրույքաչափերի հանրագումար՝ ՀՀ դրամ | Փոխհատուցման տոկոսը | Այլ ծախսերի փոխհատուցման գումարը՝ ՀՀ դրամ |
|---|---|---|---|
| 1 | **559.728.000** | 30% | **167.918.400** |

***Գ. Հանրային պաշտպանների արտաժամյա աշխատանքների համար վճարներ՝ հանրային պաշտպանների պաշտոնային դրույքաչափերի վճարման համար նախատեսված ընդհանուր գումարի 15 %-ի չափով («Փաստաբանության մասին» օրենքի 45-րդ հոդվածի 5-րդ և 7.1-րդ մասեր)***

| № | Հանրային պաշտպանների պաշտոնային դրույքաչափերի հանրագումար՝ ՀՀ դրամ | Փոխհատուցման տոկոսը | Արտաժամյա աշխատանքների համար վճարների փոխհատուցման գումարը՝ ՀՀ դրամ |
|---|---|---|---|
| **1** | **538.636.800** | **15%** | **80.795.520** |

| | |
|---|---|
| **Ընդամենը՝ 2025 թվականի բյուջե (Պաշտոնային դրույքաչափերի հանրագումար + 30% այլ ծախսերի + 15% արտաժամյա աշխատանքի համար վճարումների փոխհատուցման գումար)՝ ՀՀ դրամ** | **808.441.920** |
| | **Ութ հարյուր ութ միլիոն չորս հարյուր քառասունմեկ հազար ինը հարյուր քսան** |

**2026**

**Ա. Հանրային պաշտպանի Գրասենյակի ղեկավարի, ղեկավարի տեղակալների և հանրային պաշտպանների հաստիքների պաշտոնային դրույքաչափեր («Փաստաբանության մասին» օրենքի 45-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ և 7-րդ մասեր)**

| № | Հաստիքի անվանումը (պաշտոնը) | Հաստիքի քանակը | Հաստիքի համար աշխատավարձի պաշտոնային դրույքաչափը՝ ՀՀ դրամ | Հաստիքի մեկ ամսվա հաշվարկը՝ ՀՀ դրամ | Հաստիքի տարեկան հաշվարկը (12 ամիս)՝ ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Գրասենյակի ղեկավար | 1 | 676.000 | 676.000 | 8.112.000 |
| 2 | Գրասենյակի ղեկավարի տեղակալ | 2 | 540.800 | 1.081.600 | 12.979.200 |
| 3 | Հանրային պաշտպան | 97 | 540.800 | 52.457.600 | 629.491.200 |
| **Ընդամենը՝ պաշտոնային դրույքաչափեր ՀՀ դրամ** | | | | **54.215.200** | **650.582.400** |

**Բ. Հանրային պաշտպանի Գրասենյակի գործունեության ապահովման հետ կապված այլ ծախսերի փոխհատուցում՝ պաշտոնային դրույքաչափերի հանրագումարի 30 %-ի չափով («Փաստաբանության մասին» օրենքի 45-րդ հոդվածի 5-րդ և 8-րդ մասեր)**

| № | Պաշտոնային դրույքաչափերի հանրագումար՝ ՀՀ դրամ | Փոխհատուցման տոկոսը | Այլ ծախսերի փոխհատուցման գումարը՝ ՀՀ դրամ |
|---|---|---|---|
| 1 | **650.582.400** | 30% | **195.174.720** |

**Գ. Հանրային պաշտպանների արտաժամյա աշխատանքների համար վճարներ՝ հանրային պաշտպանների պաշտոնային դրույքաչափերի վճարման համար նախատեսված ընդհանուր գումարի 15 %-ի չափով («Փաստաբանության մասին» օրենքի 45-րդ հոդվածի 5-րդ և 7.1-րդ մասեր)**

| № | Հանրային պաշտպանների պաշտոնային դրույքաչափերի հանրագումար՝ ՀՀ դրամ | Փոխհատուցման տոկոսը | Արտաժամյա աշխատանքների համար վճարների փոխհատուցման գումարը՝ ՀՀ դրամ |
|---|---|---|---|
| **1** | 629.491.200 | **15%** | **94.423.680** |

| | |
|---|---|
| **Ընդամենը՝ 2026 թվականի բյուջե (Պաշտոնային դրույքաչափերի հանրագումար + 30% այլ ծախսերի + 15% արտաժամյա աշխատանքի համար վճարումների փոխհատուցման գումար)՝ ՀՀ դրամ** | **940.180.800** |
| | **ինը հարյուր քառասուն միլիոն հարյուր ութսուն հազար ութ հարյուր** |

***2027***

***Ա. Հանրային պաշտպանի Գրասենյակի ղեկավարի, ղեկավարի տեղակալների և հանրային պաշտպանների հաստիքների պաշտոնային դրույքաչափեր («Փաստաբանության մասին» օրենքի 45-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ և 7-րդ մասեր)***

| № | Հաստիքի անվանումը (պաշտոնը) | Հաստիքի քանակը | Հաստիքի համար աշխատավարձի պաշտոնային դրույքաչափը՝ ՀՀ դրամ | Հաստիքի մեկ ամսվա հաշվարկը՝ ՀՀ դրամ | Հաստիքի տարեկան հաշվարկը (12 ամիս)՝ ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Գրասենյակի ղեկավար | 1 | 676.000 | 676.000 | 8.112.000 |
| 2 | Գրասենյակի ղեկավարի տեղակալ | 2 | 540.800 | 1.081.600 | 12.979.200 |
| 3 | Հանրային պաշտպան | 111 | 540.800 | 60.028.800 | 720.345.600 |
| **Ընդամենը՝ պաշտոնային դրույքաչափեր ՀՀ դրամ** | | | | **61.786.400** | **741.436.800** |

***Բ. Հանրային պաշտպանի Գրասենյակի գործունեության ապահովման հետ կապված այլ ծախսերի փոխհատուցում՝ պաշտոնային դրույքաչափերի հանրագումարի 30 %-ի չափով («Փաստաբանության մասին» օրենքի 45-րդ հոդվածի 5-րդ և 8-րդ մասեր)***

| № | Պաշտոնային դրույքաչափերի հանրագումար՝ ՀՀ դրամ | Փոխհատուցման տոկոսը | Այլ ծախսերի փոխհատուցման գումարը՝ ՀՀ դրամ |
|---|---|---|---|
| 1 | **741.436.800** | 30% | **222.431.040** |

***Գ. Հանրային պաշտպանների արտաժամյա աշխատանքների համար վճարներ՝ հանրային պաշտպանների պաշտոնային դրույքաչափերի վճարման համար նախատեսված ընդհանուր գումարի 15 %-ի չափով («Փաստաբանության մասին» օրենքի 45-րդ հոդվածի 5-րդ և 7.1-րդ մասեր)***

| № | Հանրային պաշտպանների պաշտոնային դրույքաչափերի հանրագումար՝ ՀՀ դրամ | Փոխհատուցման տոկոսը | Արտաժամյա աշխատանքների համար վճարների փոխհատուցման գումարը՝ ՀՀ դրամ |
|---|---|---|---|
| **1** | 720.345.600 | **15%** | **108.051.840** |

| | |
|---|---|
| **Ընդամենը՝ 2027 թվականի բյուջե (Պաշտոնային դրույքաչափերի հանրագումար + 30% այլ ծախսերի + 15% արտաժամյա աշխատանքի համար վճարումների փոխհատուցման գումար)՝ ՀՀ դրամ** | **1.071.919.680**<br>**Մեկ միլիարդ յոթանասունմեկ միլիոն ինը հարյուր տասնինը հազար վեց հարյուր ութսուն** |

*ՀՀ փաստաբանների պալատի*
*հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար՝*
*Գևորգ Մկրտչյան*

| Ծրագրի դասիչը՝ | *Արդյունքի չափորոշիչներ* | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Միջոցառման դասիչը՝ | | 2021թ. փաստացի | 2022թ. փաստացի | 2023թ. Փաստացի | 2024թ. սպասվող (հաստատված) | 2025թ. սպասվող | 2026թ. սպասվող | 2027թ. սպասվող |
| Քանակական | Վարույթ ընդունած գործերի թիվը, հատ, այդ թվում՝ | *19292* | *18064* | *21551* | *22629* | *23760* | *24948* | *26195* |
| | Քրեական գործերի թիվ, հատ | *10492* | *11117* | *15518* | *16294* | *17109* | *17964* | *18862* |
| | Քաղաքացիական գործերի թիվ, հատ | *8800* | *6947* | *6033* | *6335* | *6651* | *6984* | *7333* |
| | Մերժված և դադարեցված դիմումների թիվը | *52* | *29* | *46* | *48* | *51* | *53* | *56* |
| Որակական | Հանրային պաշտպանների դեմ բողոքների քանակը, հատ | *53* | *45* | *66* | *63* | *67* | *70* | *73* |
| | Գոհունակության ցուցանիշ, վարած գործերի և հանրային պաշտպանների դեմ բողոքների քանակի տարբերության հարաբերակցությունը վարած գործերի նկատմամբ, տոկոս | *99.7%* | *99.8%* | *99.7%* | *99.7%* | *99.7%* | *99.7%* | *99.7%* |
| Որակական | Հանրային պաշտպանների դեմ բողոքների քանակի հարաբերակցությունը վարած գործերի նկատմամբ, տոկոս | *0.27%* | *0.25%* | *0.31%* | *0.28%* | *0.28%* | *0.28%* | *0.28%* |